ՇԱՏ ՄԵԾ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱ՞Ր

Գիֆթը ցանկանում էր տեղափոխվել Երիտասարդ կանանց մոտ:

Լյուսի Սթիվենսոն Իվել
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Նիգերիայում:

Բարի գալուստ Երեխաների «միություն» քույր Ագբորը՝ Գիֆթի Երեխաների միության ղեկավարը, կանգնած էր սենյակի առջևի մասում: «Այսօր կսովորենք «Սիրեք բոլորին» երգը»:[1]

Երաժշտությունը սկսվեց, և փոքրիկները պատրաստվեցին երգել: Բայց Գիֆթը արդեն գիտեր այս երգը: Նա հարյուր անգամ երգել էր այն: Նա իրականում չէր ուզում երգել այն այսօր:

Գիֆթը հոգնել էր Երեխաների միությունից: Տարիքով նա ավելի մեծ էր, ավելի բարձրահասակ և ավելի խոշոր, քան մյուս բոլոր երեխաները: Նրա բոլոր ընկերուհիները եկեղեցում այժմ երիտասարդ կանայք էին: Նա դեռ գրեթե մեկ տարի ուներ, մինչև որ կկարողանար նրանց հետ գնալ Երիտասարդ կանանց դասերին և միջոցառումներին:

Մինչ բոլորը երգում էին, Գիֆթը լռում էր: Նա մրմնջում էր երգերի որոշ բառեր, բայց զբաղված էր մտածելով:

Ապա մի միտք ծագեց: Միգուցե, եթե նա խոսեր եպիսկոպոսի հետ, նա թույլ կտար իրեն ավելի շուտ գնալ Երիտասարդ կանանց մոտ, որպեսզի կարողանար լինել իր ընկերուհիների հետ:

Գիֆթը եկեղեցուց հետո գտավ եպիսկոպոս Աչոմբիին: «Ողջույն, եպիսկոպոս»,- ասաց նա: «Ես կարծես այլևս չեմ զգում, որ պատկանում եմ Երեխաների միությանը: Ես ավելի խոշոր եմ և ավելի տարիքով, քան մյուս բոլոր երեխաները: Կարո՞ղ եմ փոխարենը սկսել գնալ երիտասարդ կանանց մոտ»:

Եպիսկոպոս Աչոմբին ժպտաց: «Ես գիտեմ, որ Երիտասարդ կանանց մոտ տեղափոխվելը ոգևորիչ է»,- ասաց նա: «Բայց դու կարող ես հաճախել այնտեղ միայն այն տարին, երբ կդառնաս 12 տարեկան: Ցավում եմ»:

Գիֆթը հայացքն իջեցրեց և նայեց իր կոշիկներին: «Լավ»:

«Երեխաների միությունը բախտավոր է, որ դու դրա մի մասն ես»,- ասաց եպիսկոպոսը: «Կարծում եմ՝ փոքր երեխաները շատ են հիանում քեզանով: Կարող ես մեծ փոփոխություն բերել նրանց համար»:

Օրվա մնացած մասը նա շատ տխուր էր: Մեկ տարին երկար ժամանակ էր, քանի որ նա միայնակ էր զգում Երեխաների միությունում:

«Գիֆթ»,- ասաց քույր Ագբորը,- կկամենա՞ս օգնել ինձ այս շաբաթվա երգն ուսուցանելիս:

«Անշուշտ»,- ասաց Գիֆթը: «Ի՞նչ երգ ենք սովորում»:

««Աստծո զավակն եմ»»,-[2] ասաց քույր Ագբորը: «Շնորհակալություն քո օգնության համար: Կարծում եմ՝ երեխաների համար ուրախ փորձառություն կլինի, երբ սովորեն քեզանից»:

Երբ երգեցողության ժամը սկսվեց, Գիֆթը կանգնեց դասարանի դիմաց: «Այսօր ես ձեզ կսովորեցնեմ իմ սիրելի երգերից մեկը»,- ասաց նա: Նա օգնեց երեխաներին սովորել բառերը: Հետո երգեց նրանց հետ: Երգելիս Գիֆթը ներքուստ ջերմ ու երջանիկ էր զգում: Նա գիտեր, որ դա Սուրբ Հոգին է:

Շատ չանցած Երեխաների միության դասը գրեթե ավարտվեց: Եզրափակիչ աղոթքից հետո Գիֆթը քայլեց դեպի սրահ: Նա ցանկանում էր գտնել իր ընկերուհիներին Երիտասարդ կանանց դասից հետո և ասել ողջույն:

Բայց փոքրիկ աղջիկներից մեկը կանգնեցրեց նրան: «Շնորհակալություն մեզ հետ երգելու համար»: Նա գրկեց Գիֆթին: «Ուզում եմ քեզ նմանվել, երբ մեծանամ»:

Գիֆթը ժպտաց: Նա դեռևս անհամբեր սպասում էր, որ կգնա Երիտասարդ կանանց մոտ, և հույս ուներ, որ հաջորդ տարին արագ կանցնի: Բայց նա գիտեր, որ դեռ կարող է սովորել և լավ բաներ անել Երեխաների միությունում:

> ***«Ես կարծես այլևս չեմ զգում, որ պատկանում եմ Երեխաների միությանը: Ես ավելի խոշոր եմ և ավելի տարիքով, քան մյուս բոլոր երեխաները: Կարո՞ղ եմ փոխարենը սկսել գնալ երիտասարդ կանանց մոտ»:***

Բայց հետո Գիֆթը ավելի շատ մտածեց այն մասին, թե ինչ ասաց եպիսկոպոս Աչոմբին: Իսկապե՞ս մյուս երեխաները հիանում էին իրենով: Նա երբեք դա չէր նկատել:

Հաջորդ շաբաթ Գիֆթը հրաժեշտ տվեց իր ընկերներին, երբ նրանք քայլում էին դեպի Երիտասարդ կանանց սենյակ: Նա հառաչեց և քայլեց դեպի Երեխաների միության դասարան:

Եվ միգուցե եպիսկոպոս Աչոմբին ճիշտ էր: Նա կարող էր փոփոխություն բերել: ●

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՍԻՄԻՍ ԲԼՈՔԻՆ

1. *Children's Songbook*, 136
2. *Children's Songbook*, 2